Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

22164

891.99.092
L-38F

2003

197

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

# ԼԷՕ

## (Աղաքել Բաբախանեան)

կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յոբելեանի առթիւ.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Թառումեանի
1908

891.99.092
Լ-38 բ

ԱՐԾԻՒ
Կ. ՊՈԼՍՈՅ 1908

891.99-092
Ա-38բ
197
Ռ 348
31

Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

# ԼԷՕ

## (Աստաքել Բաբախանեան)

Կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յոբելեանի առթիւ.

ԱՐԽԻՎ
Ն. ՊՈՂԻՍ 1908
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ա. Թառումեանի
1908

Камерная п/б фабрики
Штрафъ В3-262926
Камерная п/б фабрика им. С. Ив.

Լ Է Ո

(Սամուել Բարախանեան)

1883—1908

Ա. ԳԵՎԵՋԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ
A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK

Բոլորովին աղքատ և հասարակ ծնողների զաւակ էր Առաքել Բաբախանեանը (Լէօ)։ Նա ծնուել է Ղուշում 1860 թ. ապրիլի 14-ին։ Նրա ծնողները ապրում էին Ղուշու յետ ընկած թաղերից մէկում և անդադիր դժուարութեամբ հազիւ կարողանում էին իրանց ընտանիքի օրուայ պարէնը հայթհայթել։ Առաքելի հայրը՝ դերձակ Գրիգորը ստիպուած էր թողնել իր արհեստը, որովհետև դրանով չէր կարողանում նոյն իսկ օրուայ հացի փող ձեռք բերել և Ղուշու եկեղեցիներից մէկում ժամկոչ դառնալ։ Սակայն և այս պարապմունքը չէր կարող բաւականաւոր ընտանիքի գոյութիւնը պահպանել։ Մի ընտանիք, որի մէջ բացի Առաքելից կային նաև երեք քոյրեր և երկու խորթ եղբայրներ, որոնք ոչնչով չէին օգնում այդ խեղճ ու կրակ ընտանիքին։ Դրա համար Առաքելի մայրն էլ—Եղիսաբէթը ստիպուած էր քաղաքի հարուստ տներում լուացք անելով կամ հաց հունցելով օգնութեան հասնել իր անճարակ ամուսնուն։

Բնական է, որ այդպիսի անօգնական ծնողները չէին կարող ուշադրութիւն դարձնել իրանց փոքրիկ, բայց ընդունակ զաւակի՝ Առաքելի կանոնաւոր կրթութեան վրայ. հէնց դրա համար էլ սկզբնական

գրագիտութիւն սովորելու համար Առաքելին նրանք յանձնում են Շուշու խալիֆաներից մէկին՝ Ամիր վարժապետին, որի իսկական մանկավարժութիւնը իր երկար ճիպոտն էր կազմում։ Այդ ճիպոտի հարուածներից Առաքելն էլ միւս աշակերտների պէս սև խալեր է ստանում իր մարմնի վրայ։ Հասարակ գրագիտութիւնը մի կերպ սովորելուց յետոյ, ծնողները փոքրիկ Առաքելին տալիս են Շուշու թեմական դպրոցը, որի տեսուչը այդ ժամանակ գրաբարագէտ Մաղաքիա Պլուզեանն էր. ժամանակակից մտքով վերցրած, վերոյիշեալ դպրոցն այն ժամանակ ոչ մի կրիտիկայի չէր կարող դիմանալ, բայց այնուամենայնիւ իր աշակերտներին կրթական այդ հիմարկութիւնը լաւ հայկաբանութիւն էր սովորեցնում։ Դպրոցական դասաւանդութեան ժամանակ ուսուցիչները իրանց ամենագլխաւոր ուշադրութիւնը դարձնում էին հին հայկական պատմագիրների վրայ, որոնց գլխաւոր երկերը գրեթէ ամբողջապէս անգիր անել էին տալիս իրանց աշակերտներին։ Դպրոցում տիրապետող ուղղութիւնը սխոլաստիքականն էր, որի գաղը կազմում էր գրաբար լեզուն։ Կենդանի լեզուի միակ դասագիրքը թեմական դպրոցում այն ժամանակ Ե-ջիցեանի «Ընթերցարանն» էր, որի խղճուկ բովանդակութիւնը Առաքելը անգիր էր արել։ Աշակերտները ոչ միայն բերան էին անում մեր մատենագիրների գրուածքները, այլ և սովորում էին գրաբար ոտանաւորներ և շարադրութիւններ գրել։ Առաքելի և նրա դասընկեր աշակերտների գրաբար ոտանաւորներից մի քանի նմուշներ մինչև անգամ տպուած



են Զմիւռնիայում հրատարակուող «Արշալոյս Արարատեան» թերթում, որոնք այն ժամանակ սիրով էին կարդացուում։ Առաքելը իր միջնակարգ և հայկական կրթութիւնը ստանում է թեմական դպրոցում, որի ուսուցչական կազմը բաւական աննախանձելի մտաւոր պաշարի տէր մարդկանցից էր բաղկացած։ Իբրև ուսուցիչ այն ժամանակ աչքի էր ընկնում Դորպատի համալսարանը աւարտած Փափազեան վարդապետը, որ լաւ ֆրանսիագէտ և յայտնի բանաստեղծ էր։ 1874 թ. Առաքելը իբրև առաջնակարգ աշակերտ աւարտում է թեմական դպրոցի այն ժամանակւայ լրիւ դասընթացը (4 դասարանեան) Խորէն վարդապետ Ստեփանէի տեսչութեան օրով։

Առաքելի ազգատ ծնողները անհամբեր սպասում են իրանց որդու դպրոց աւարտելուն, յոյս ունենալով, որ նա դրա շնորհիւ մի համեստ պաշտօնի տէր կը դառնայ և մի քիչ կապահովի իրանց ընտանիքի խղճուկ դրութիւնը։ Սակայն թեմական դպրոցում ռուսերէն լեզուի դասաւանդութիւնը շատ թոյլ էր եղել, այնպէս որ Առաքելը չէր կարող նոյն իսկ գրքերի պաշտօն ստանալ որևէ մէկի մօտ։ Դրա հետևանքով էլ իր ազգականների խորհրդով Առաքելը 1874 թ. մտնում է Շուշու քաղաքային վերակազմեալ դպրոցը, որը նրա համար կրթական մի բոլորովին նոր աշխարհ էր թեմական դպրոցից յետոյ։ Դպրոցի ուսուցչական խմբի մեծ մասը Աղէքսանդրեան դպրոցը աւարտած ազատամիտ և նոր հովերով բռնուած մանկավարժներից էր բաղկացած, որոնք իրանց առարկաները շատ լաւ էին գրել և աշակերտների մէջ հե-

տարբերություն դարձեցրել դրանց շուրջը։ Ուսումնածարտ և արտակարգ ընդունակություններ տէր Առաքելը այդ դպրոցում էլ դառնում է իր աշակերտակիցների մէջ կենտրոնական անձնաւորություն, որի օգնությանն էին դիմում շատ անգամ նոյն իսկ բարձր դասարանների աշակերտները իրանց դրաւոր շարադրությունների համար։ Առաքելի ընդունակությունն ու ընթերցասիրությունը դրաւում է նաև իր ուսուցիչներից շատերի ուշադրությունը, որոնցից մանաւանդ մէկը նրան շարունակ վիպական և հատարակագիտական բովանդակություն ունեցող գրքեր էր տալիս կարդալու։

1877 թ. սկսւում է ռուս-տաճական պատերազմը։ Առաքելը դեռ քաղաքային դպրոցի վերջին դասարանի աշակերտ էր, երբ սկսեց Զուշուց թղթակցել Թիֆլիսում հրատարակւող «Кавказъ» լրագրին. նրա այդ առաջին թղթակցությունը ազմուկ է բարձրացնում ոչ միայն Զուշու հասարակությանն մէջ, այլ և դպրոցում, որի համար նկատողությանն է արժանանում դպրոցի տեսուչ Նիկիտինի կողմից։ Այդ թղթակցությանն մէջ Առաքելը յայտնում էր, որ Ղարաբաղի թուրքերը տնհամբեր սպասում են, թէ երբ պէտք է տաճիկները ներս մտնեն Ղարաբաղ, որպէս զի իրանք միանան նրանց հետ։

1878 թ. Առաքելը իբրև առաջնակարգ աշակերտ աւարտում է քաղաքային դպրոցը և ընտանեկան ծանր հոգսերի պատճառով չէ կարողանում իր ուսումը շարունակել և բարձրագոյն կրթությունն



ստանալ, չը նայելով որ տեսուչ Նիկիտինը նրան շարունակ խորհուրդ էր տալիս այդ, ի նկատի ունենալով նրա սէրը և ընդունակությունը։

Զուտով մեռնում է ժամկոչ Գրիգորը և իր ամբողջ ընտանիքի ծանր բեռը թողնում է Առաքելի վրայ։ Նոյն թուականին Առաքելը դնում է նաւթային մայրաքաղաքը գործ գտնելու։ Այնտեղ երկար ժամանակ պարապ չ մնում և վատ ապրուստի պատճառով թոքերի բորբոքում ստանում։ Բազում անցկացրած օրերը Առաքելը նկարագրել է իր «Պանդուխտ» վերնագրով վիպակի մէջ, որի մէջ դուրս բերուած միջավայրումն է անցկացրել և նա իր տարիներից մէկը։

«Պանդուխտ» վիպակի տակ Առաքելը առաջին անգամ ստորագրում է «Լէօ» կեղծ անունը, որը նրա ամբողջ գրական գործունէությանն ժամանակ և մինչև այսօր էլ մնում է իբրև գլխաւոր կեղծ անունը։

Եթէ ի նկատի ունենանք նաև այն հանգամանքը, թէ պատերազմից յետոյ ինչպէս խանդագին էր կեանքը—(ալիւրի փութը արժէր 4 ռուբլի) Զուշում, այն ժամանակ հասկանալի կըլինի նիւթական այն անտանելի կացությունը, որին ենթարկուած էր Լէօյի ընտանիքը։ Այն ժամանակ Լէօն իր ընտանիքով ապրում էր մի խրճիթում, որը նրանց յանձնել էր հարուստ քաղաքացիներից մէկը այն պայմանով, որ Լէօյի մայրը ծառայէր նրանց տանը, իսկ իրանք պահպանէին այդ քաղաքացու պարտէզը։

Հոր մեռնելուց մի ամիս յետոյ Լէօն հասարակ դրադրի պաշտօն է ստանում քաղաքային նօտարի մօտ, ամսական 8 ռուբլի ռոճիկով, որի maximum-ը հասնում էր 15 ռուբլու։ Բարոյական տեսակէտից դա մի այլանդակ շրջան էր, որի մէջ ստիպուած էր ապրել Լէօն, նրա ծառայակիցները թղթախաղութեամբ և գինեմոլութեամբ տարուած մարդիկ էին, որոնք, քիչ էր մնացել, որ Լէօին խրէին տիղմի մէջ։ Սակայն նա մի այդպիսի շրջանում էլ ցոյց է տալիս իր բարոյական տոկունութիւնը և ազատ ժամերին պարապում է ընթերցանութեամբ, թարգմանութիւններով և իր սուղ միջոցներով նոյն իսկ թերթեր է ստանում։

Նօտարի մօտ գրադրի պաշտօնով մնում է 1879-81-ի մարտը, որից յետոյ նա տելեգրաֆիստի պաշտօնով մտնում է Շուշու հեռագրատունը 23 ռուբլի ռոճիկով և այդ հիմնարկութեան մէջ ծառայում է մինչև 1893 թիւը։ Դէռ նօտարի մօտ եղած ժամանակ մէկ-մէկ թղթակցութիւններ էր ուղարկում Թիֆլիսի օրաթերթերին օրուայ դէպքերի մասին, որոնց բովանդակութիւնը կազմում էին Շուշու դաւառական կեանքի զանազան վաշխառուների բացասական գործերը, ժամանակակից կեանքի թանգութիւնը և ուրիշ հարցեր։

1880/81 թուականներին Շուշու մտաւոր հետաքրքրութեան գլխաւոր կենտրոնը ներկայացնում էր տեղական երիտասարդ ինտելիգենտների մի շրջան, որի մէջ այն ժամանակ աչքի էին ընկնում Ղ. Ղազարեան, Ս. Մանդինեան, Տ. Նազարեան, Ն. Տէր-



Աւետիքեան, Ս. Հախումեան, Թոխմախեան, Յովհաննիսեան և ուրիշները։ Այդ շրջանում գրական մի բաւական համեստ շարժում կար։ Վերոյիշեալ ինտելիգենտները պարբերական ժողովներ էին անում, պարապում էին խմբական ընթերցանութեամբ և նոյն իսկ մանկական դրքեր էին հրատարակում։ Շուշու տպարանատէրը այդ դրքերի համար սրբագրիչի պաշտօնով հրաւիրում է Լէօին։ Քիչ ժամանակից յետոյ Լէօն առիթ է ունենում անձամբ ծանօթանալ այդ տպարանում հրատարակող դրքերի հրատարակիչների հետ և շուտով դառնում է վերոյիշեալ շրջանի մօտիկ անդամներից մէկը։ Բնական է այն բարերը և գրական ազդեցութիւնը, որ ունեցաւ վերոյնշեալ շարժումը Լէօի վրայ։ Այդ տպագրանում տպւեց առաջին անգամ և Բաֆֆիի «Խենթը» Ա. Ապրէսեանի հրատարակութեամբ, որով Լէօն այնքան է յափշտակւում, որ կարդում է եօթն անգամ։

Շուշու ինտելիգենտ շրջանում Լէօի սէրը դէպի գրականութիւնը և հայ մտաւորը աւելի է զարգանում։ Նա այժմ սկսում է յաճախակի թղթակցութիւններ ուղարկել Թիֆլիսի հայկական ամենօրեայ պարբերական թերթերին։ 1882 թ. Լէօն ստանում է «Մշակ» լրագիրը։ Գրիգոր Աբծրունու առաջնորդողները ցնցող տպաւորութիւն են թողնում երիտասարդ Լէօի վրայ։ Այդ առաջնորդողներից մանաւանդ մէկը, որտեղ Աբծրունին մատնացոյց էր անում մեր դաւառներում թագաւորող մտաւոր խաւարի վրայ և պախարակում բազմազան

օգնության կարօտ գաւառներից խոյս տուող հայ ինտելիգենտներին, առանձնապէս գրաւում է Լէօի ուշադրութիւնը։ Չէ՞ որ նա էլ մի այդպիսի գաւառի սրտայաւ երիտասարդ էր, որին շատ լաւ ծանօթ էին հայ գլխաւոր գաւառներից ժէկի ցաւերն ու կարիքները։ Դր. Սրբունու մտքով Լէօն էլ գրում է իր առաջին թղթակցութիւնը «Մշակ»-ին 1882 թ-ին, որով և նա մի անկամ ընդմիշտ կապւում է «Մշակ»-ի հետ։ առաջին յօդուածի լոյս տեսնելուց խրախուսուած, Լէօն «Գաւառացի» կեղծ տորագրութեամբ «Մշակ»-ին պարբերաբար ուղարկում է մի շարք թղթակցութիւններ, որոնց նիւթը վերցրած էր Ղուշու տեղական կեանքից։ Այդ թղթակցութիւնները շուտով արժանանում են Սրբունու առանձին հետաքրքրութեան և ուշադրութեան։ Մի քան ամսից յետոյ Լէօն սկսում է «Մշակ»-ում դնեղել բանաստեղծական յօդուածներ, որոնց նիւթը կազմում էր Հայկունու բնաղատութիւնը Բաֆֆիի մասին։ Սրբունին նամակներով և Ղուշի գնայող ծանօթներով շարունակ գովում և խրախուսում էր Լէօին։ Վերջինս արդէն դառնում է «Մշակ»-ի կանոնաւոր աշխատակիցներից մէկը։ 1883 թ. Ղուշում առանձին գրքով լոյս է տեսնում Լէօի թարգմանութեամբ Մօրդովցեվի «Արարատի գլուխը» վերնագրով աշխատութիւնը, որի մէջ հեղինակը նկարագրում է իր կատարած ճանապարհորդութիւնը Երևանեան նահանգում և Մասիսի գագաթը բարձրանալը։

1884 թ. հայկական հասարակական կեանքի խոշոր երեոյթներից մէկը կաթուղիկոսական ինդիրն



էր։ Գէորգ Դ-ի մահից յետոյ կաթուղիկոսական աթոռը թափուր էր մնացել և սպասում էր նոր կաթուղիկոսի ընտրութեան։ Կովկասում սկսել էր կաթողիկոսական պայքարը, որին եռանդուն կերպով մասնակցում էր նաև «Մշակ»-ը։ Նախընտրական պայքարը եռում էր նաև Ղուշում, որ նրա բնակիչներին բաժանել էր կուսակցական խմբերի։ Լէօն իբրև աչքի ընկնող «Մշակական» ինտելիգենտներից մէկը՝ կուսակցական կռիւներ է մղում Ղուշու պատանողական տարրի դէմ և պրոպագանդա է անում յօգուտ «Մշակ»-ի կաթուղիկոսական թեկնածուի։ Այդ ինդրի առթիւ նա էր Ղուշուց գլխաւոր աշխատակցողը «Մշակ»-ին։

1884 թ. առանձին գրքով Ղուշում լոյս է տեսնում Լէօի առաջին ինքնուրոյն աշխատութիւնը «Ուխտաւորի յիշատակարանը», որտեղ հեղինակը շնորհալի կերպով նկարագրում է իր ճանապարհորդութիւնը դէպի Ղարաբաղի նշանաւոր վանքերից մէկը՝ «Տիգրափոյտ» կոչուած ուխտատեղին։ Այդ միևնոյն թուականին Գ. Սրբունին ստիպուած է լինում նիւթական սուղ միջոցների պատճառով ժամանակաւորապէս դադարեցնել «Մշակ»-ի հրատարակութիւնը, յոյս ունենալով ապագայում նոր միջոցներով վերսկսելու իր թերթի հրատարակութիւնը։ Ահա հէնց այդ դադարած «Մշակ»-ի վերջին համարներում տպւում է Լէօի առաջին վէպը «Մնապաշտութեան քուրմը» վերնագրով։ Վերջինս Ղուշու գաւառական կեանքից վերցրած մի պատկեր էր, որտեղ հեղինակն բաւական հոտառութեամբ դուրս է բերում մի կախարդ, որ

խաբում է ծանր հիւանդ ունեցող տէրերի, իբր թէ ինքը կարող է բժշկել հիւանդին և նիւթականապէս շահագործելով նրանց, ի հարկէ ոչնչով չէ կարողանում օգնել հիւանդին, որ և շուտով մեռնում է։

«Մշակի» դադարելուց յետոյ Լէօն գրում է Ա. Յովհաննիսեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Արձագանք» շաբաթաթերթում, որի յարաբերութիւնը «Մշակ» լրագրի հետ դեռ ևս այնպէս թշնամական չէր, ինչպէս որ եղաւ վերջին տարիները, երբ արդէն «Արձագանք»-ը օրաթերթ էր դարձել։ Լէօն, որ այդ ժամանակ ինքնակրթութեամբ արդէն բաւական մըտաւոր պաշար էր ձեռք բերել և ծանօթացել ռուս գրականութեան նշանաւոր ներկայացուցիչների գլխաւոր երկերի հետ, այժմ սկսում է «Արձագանք»-ին աշխատակցել ոչ միայն տեղական կեանքին վերաբերող թղթակցութիւններով և յօդուածներով, այլ և պատմական մանր ուսումնասիրութիւններով։

1885 թ. Մարտէրում սկսում է հրատարակուել Մկրտիչ Փորթուգալեանի խմբագրութեամբ «Արմենիա» լրագիրը, որի գլխաւոր նպատակն էր արտասահմանում պրոպագանդա անել «հայկական դատի» համար։ Երիտասարդ գրող Լէօն իր գրական բեղմնաւոր աշխատանքից բաժին է հանում նաև այդ հայ թերթին, որտեղ «ռուսահայ» ստորագրութեամբ զետեղում է յօդուածներ և երկու փոքրիկ պատկերներ, որոնցից մէկը—«Հայ գիւղացի»-ն պատկերացնում է հայ ժողովրդի այդ աշխատասէր մասի ժամանակակից աննախանձելի դրութիւնը, իսկ երկրորդը մի վէպիկ է ռուս-տաճկական պատերազմից։



1886 թ. վերսկսում է «Մշակ»-ի հրատարակութիւնը։ Գ. Արծրունին «Մշակ»-ի շուրջն է համախմբում իր նախկին գլխաւոր աշխատակիցներին, որոնց թւում և Լէօին։ Վերջինս, որ նախկին տարիներում յաճախակի էր արժանացել Գ. Արծրունու խրախուսանքներին և գովեստներին «Մշակ»-ում զետեղած իր շնորհալի թղթակցութիւնների, յօդուածների և պատկերների համար, այժմ աւելի ուժգին թափով ու եռանդով սկսում է իր սիրած թերթին աշխատակցելը։ Մէկը միւսի ետևից գրում է յօդուածներ, թղթակցութիւններ, պատկերներ, վէպիկներ, գրական, մանաւանդ քննադատական յօդուածներ և այլն։ Այդ շրջանի սկզբում Լէօի գրած աջող պատկերներից մէկն էլ նրա «Պանդուխտ» վերնագրով գրուածքն է, որի մէջ բաւական աջող կերպով պատկերացրել է պանդխտութեան վնասակար և քայքայիչ հետևանքները։ Արծրունին մի առանձին առաջնորդող նուիրելով այդ վէպիկի (1888) մէջ հեղինակի արծարծած մտքին, ցոյց էր տալիս պանդխտութեան կորստաբեր հետեւանքները։ Դրանից յետոյ Լէօն գրում է մի շարք ուրիշ պատկերներ, որոնց մէջ շատ կենդանի կերպով դուրս էին բերուած գաւառական կեանքի մի քանի սովորական տիպեր (ագա հողաբարձու, գաւառական հասարակական գործիչներ և այլն)։ Դրանց ընդհանուր խօսքերով կարելի է կոչել կենցաղավարական պատկերներ։ Դրանց շարքում կարելի է դասել հեղինակի «Ծայրեր»-ը (Ջուշու բէյլիքների հրատարակութեամբ) «Գաւառական հերոսներ» և այլն։ 1888 թւին Լէօն «Մշակ»-ում տալիս է նաև մի քա-

13598-58

նի ընդարձակ ուսումնասիրութիւններ Տաճկահայ կին գրող Տիւսաբի և Գարեգին Սրուանձտեանի երկերի մասին, որոնք քննադատական մեծ արժէք ունեն։

Միևնոյն թուին Լէօն աշխատակցում է մանկական «Ընդիւր» ամսագրին «Լէօ» և «Հրահատ» կեղծ անուններով, որտեղ զետեղում է մեծ մասամբ պատմական վէպեր («Թաթախման դիշեր», «Սպանուած հայրը» և «Վահան Մամիկոնեան»), որոնք յետոյ արտատպւում են առանձին գրքերով։ Դա «Ընդիւր» ամսագրի ծաղկած ժամանակն էր, որի մէջ Լէօն գլխաւոր աշխատակիցներից մէկն էր Ղ. Աղայեանի հետ միասին։ Այդ ամսագրումն է լոյս տեսնում Լէօի նաև մեծ մարդկանց կենսագրութիւնների ժողովրդական սերիան «Երևելի մարդիկ» ընդհանուր վերնագրի տակ։ Այդ կենսագրութիւններից նշանաւոր են «Վիկտոր Հիւգո»-ն և «Լիվինգստոն»-ը։

1889 թուին հրատարակւում է Ա. Երասխանեանի «Մուրճ» ամսագիրը, որի գլխաւոր աշխատակիցների շարքումն էր նաև Լէօն։ Այդ ամսագրումն են լոյս տեսնում հեղինակի Ղարաբաղի Խաչէն գաւառում կատարած ճանապարհորդութեան շատ գեղեցիկ կենդանի և ընդարձակ նկարագրութիւնը «Հինգ օր» վերնագրով, յետոյ «Կորածներ» վէպը, հրատարակախօսական մի շարք յօդուածներ «Գաւառական կեանք» ընդհանուր վերնագրով և ուրիշ գործեր։ Միաժամանակ նա աշխատակցում է Մ. Բարխուդարեանի «Հանդէս գրականական և պատմական» պարբերական ժողովածուներում, որ լոյս էր տեսնում Մոսկվայում։ Այդ հանդէսումն է տպուել



Լէօի ընդարձակ քննադատութիւնը «Դաւիթ և Մըհերի» մասին և «Ծերը Մարկոս» վէպիկը գիւղական կեանքից վերցրած։ Այդ վէպիկում հեղինակը դուրս է բերում մի գիւղացի, որ թողնում է իւր հայրենի հողը, վերադառնում մի քաղաքի անասելի շրջան և դրանով կորցնում իւր տնտեսական բարեկեցութիւնը։

1890 թ. Թիֆլիզում Տ. Նաղարեանի խմբագրութիամբ հրատարակւում է «Տարազ» պատկերազարդ շաբաթաթերթը, որի խմբագիրը Լէօին հրաւիրում է նաև իւր այդ երկրորդ թերթին աշխատակցելու։ Լէօն արդէն այնպիսի առաջնակարգ գրողների շարքն էր անցել, որի աշխատակցութիւնը գրական էր համարւում իրաքանչիւր նոր հայ թերթի ապագայի համար։ Այդ շաբաթաթերթումն Լէօն հրատարակում է Ղարաբաղի մելիքների կռիւը պատկերացնող մի պատմական վէպ «Վերջին վերքեր» վերնագրով և «Գողացած ատաղ» պատկերը, որ գաւառական բարքերի և հասկացողութիւնների մի նկարագրութիւն էր։ Դրանից առաջ Լէօն մի առանձին գրքով լոյս էր ընծայել իւր «Վէպ, թէ պատմութիւն» գրուածքը, որ ներկայացնում էր կեղծիքը դուրս հանող մի քննադատական աշխատութիւն Մ. վ. Բարխուդարեանի «Գաղանիք Ղարաբաղի» գրուածքի մասին։ Նոյն տարուայ գործ է և Լէօյի «Կոյրի աղջիկը» վերնագրով գեղեցիկ պատկերը, որտեղ նկարագրւած աղջիկը մի փոր հացի համար զոհ է դառնում մի անբարոյական հարուստի։

1891 թ. «Մշակ»-ի նախկին աշխատակից Խ. Մալու-

13598-58

մեանի հրատարակությամբ Թիֆլիզում լույս է տեսնում ժողովրդական գրքերի մի սերիա, որի ամենաաջող հրատարակություններից մեկը «Անդաղին» վիպակը պատկանում է Լէօին։ Դիւղակոն վաշխառուների կեանքը գեղեցիկ կերպով պատկերացնող այդ վիպակը մինչև այժմ էլ համարւում է հեղինակի գեղարուեստական յաւագոյն երկերից մեկը։

1893 թ. Լէօի կեանքում մի մեծ փոփոխութիւն է կատարւում, որը ահագին ազդեցութիւն է ունենում նրա ապագայ գրքագրման և գրական գործունէութեան վրայ։ Մինչև այդ թուականը նա ապրում իւր ընտանիքի գոյութիւնը պահպանում էր տելեգրաֆիստի պաշտօնով, որի ռոճկի maximum-ը վերջին տարին 45 ռուբլու էր հասնում։ Նա տեղափոխւում է Բագու «Արօր» տպարանի կառավարչի պաշտօնով։ Սկզբում նա այդ պաշտօնում չը կարողացաւ գրական ինտենզիւ աշխատանքներով զբաղուել, որովհետև տպարանական ծանր գործերը ամբողջապէս կլանում էին նրա ժամանակը և բացասական ազդեցութիւն թողնում նրա առողջութեան վրայ։

Ազատ ժամանակը նա նուիրում էր «Արօր» պատկերազարդ օրացոյցների խմբագրութեան, որ հրատարակում էր նոյն տպարանը։ Այդ օրացոյցները իսկապէս գրական ժողովածուներ էին, որոնց գրեթէ բոլոր մասերը գրում էր Լէօն, դրանց մէջ նա ունի պատմական, գրական, քննադատական և վիճակագրական գրուածքներ, որոնք իւր ժամանակին շատ էին տարածւում և մեծ հետաքրքրութեամբ



կարդացւում։ Բացւում Լէօն լոյս ընծայեց իւր «Ամանահանութիւն» վէպը և այնտեղից աշխատակցում էր «Մշակ»-ին և «Արարատ»-ին գրական և հրապարակախօսական յօդուածներով։

1895 թ. երբ մեռել էր տիկին Մելիք-Աղամալեան-Արծրունին, նա «Մշակ» լրագիրը կտակել էր իւր ամուսնու եղբայր պրոֆ. Անդրէաս Արծրունուն։ Վերջինս չը ցանկանալով թողնել Գերմանիայի Ախէն քաղաքի բաղմարուեստան դպրոցում իւր պրոֆէսօրական պաշտօնը, անունով յանձն առաւ «Մշակ»-ի հրատարակչի պաշտօնը, և վճռել էր նորից վերադառնալ Գերմանիա։ Նա Թիֆլիսում եղած ժամանակ «Մշակ»-ի համար կազմակերպում է խմբագրական մի նոր կազմ և Լէօին Բագուից հրաւիրում է խմբագրութեան մշտական աշխատակցի և քարտուղարի պաշտօնով։ Այդ օրուանից սկսւում է Լէօի գրական և հրապարակախօսական գործունէութեան մի նոր և աւելի արդիւնաւէտ շրջանը, որ տեւում է մինչև 1906 թուականը։ Մինչև այդ ժամանակ նա չէր կարողացել իրեն ամբողջապէս նուիրելու գրական գործունէութեան, որովհետև նա ստիպւած էր իւր ընտանիքի գոյութիւնը պահպանել կուելով իրեն շրջապատող նիւթական ամենաանախանձելի պայմանների դէմ։ Այժմ խմբագրութեան մէջ մշտական աշխատակցի պաշտօն ստանալով ամենահամեստ ռոճիկով, հնարաւորութիւն էր ստանում գոնէ ուրիշ գործերով չը պարապել։

Անդրէաս Արծրունու հրաւէրը Լէօն ուրախութեամբ ընդունեց և վերջնականապէս տեղափոխուեց

Թիֆլիզ։ Շատ պատասխանատու աշխատանք էր պահանջում նրա այդ պաշտօնը։ Խմբագրութեան մէջ նրան վիճակուած էր առաջնակարգ դեր խաղալ, որովհետև նա իր ուսերի վրա տանում էր այդ թերթի գլխաւոր բաժիններից մի քանիսը։ «Մշակի» համար նա գրում էր առաջնորդող յօդուածներ, պատկերներ, վէպեր, քննադատական պատմական և գրական ուսումնասիրութիւններ։ Առանձնապէս նա շատ է զբաղցնում լրագրի քննադատական գրախօսական բաժինը և մարտական մասի ամբողջ ծանրութիւնը իր վրա առնում։ Թւել այն բոլոր աշխատութիւնները, որ նա գետեղել է «Մշակ»-ում 1895—1906, նոյն իսկ ֆիզիքապէս անհնարին է։ Զափազանցութիւն չի լինիլ, եթէ ասենք, որ այդ շրջանի «Մշակ»-ի գրէթէ իւրաքանչիւր համարի հետ կապուած է Լէօի կենարօնական անունը։ Բացի բազմաթիւ լրագրական գործերից Լէօն այդ շրջանի «Մշակ»-ում հրատարակում է «Մելիքի աղջիկը» պատմական մեծ վէպը, «Ազգի պահապան», «Գերեզմաններն են խօսում» վիպակները և նոր Ջարուայ ու Զատկի առիթներով գրած պատկերները։ Այդտեղ են լոյս տեսնում և նրա «Կրետէի ազատագրութեան» մանրամասն պատմութիւնը և հերթական քաղաքական հարցերի մասին յօդուածները։ Աչքի են ընկնում նաև Լէօի պատմական-հրապարակախօսական ընդարձակ յօդուածներից մանաւանդ երկուսը—«Հին ուրուականը» և «Իլիա ճաւճաւաձէ»-ն. առաջինը ուղղուած է այն կաթոլիկ միսիոնարների դէմ, որոնք Վանում սովի ժամանակ սովեալ հայերին գրամ բաժանելիս պրո-



պագանդա են անում հաւատափոխութեան համար։ Այդ բանի համար Հայր Զարմանը այնքան էր ոգեորւել, որ Եւրոպայում նոյն իսկ լուրեր էր տարածել, թէ Վանի հայերը իրանց տարբեր հաւատի համար են ենթարկւել այդօրինակ մի մեծ աղէտի։

«Իլիա ճաւճաւաձէն» իւր ժամանակին մեծ տրպաւորութիւն է թողել հայ ընթերցողների վրայ։ Երբ վրացի այդ նշանաւոր գրողը հրատարակեց իր „Հայերը և աղաղակող քարերը“ վերնագրով շովինիստական աշխատութիւնը, որով վրացիներին գրգռում և ոստիկ յարձակւում էր հայերի դէմ, Լէօն այդ գրուածքին 9 բանասիրական է նւիրում, որոնց մէջ նա դատապարտում է վրացի հեղինակի թունաւոր շովինիզմը, հերքում է նրա զրպարտութիւնները և սխալները հայերի նկատմամբ, պատճառաբանելով որ հայերը և վրացիները միանման ճակատագրի զաւակներ են, հետևապէս և վնասակար է նրանց մէջ թոյն պատուաստելը։

Լէօն ընդհանուր վերնագիրների տակ պարբերական մի քանի բաժիններ է սկսում «Մշակ»-ում, որոնց գլխաւոր նիւթերը օրւայ հերթական հարցերն էին մատակարարում։ Այդպէս էին օր. «ընթերցողի օրագիրը», «կիւրակնօրեայ զրոյցներ» և այլն։ Բացի դրանից նա մի քանի տարի շարունակ տանում է „Մամուլ“ ի բաժինը, որի մացնողը առաջին անգամ „Մշակ“-ում լինում է Լէօն, որ մեծ ընդունելութիւն է գտնում ոչ միայն ընթերցողների, այլ և հայկական միւս թերթերի և ամսագիրների կողմից։

Եղել է նաև այնպիսի ժամանակ, երբ Լէօն

կատարել է խմբագրի պաշտօնը և միայնակ տարել է ամբողջ թերթը, երբ խմբագրութեան բոլոր անդամները բացակայ էին քաղաքից։ «Քրական գէմքեր» ընդհանուր վերնագրի տակ Լէօն տուել է մի քանի գրական անալիզներ Դամառ-Բաթիպայի, Ընազարեանի և ուրիշների մասին։

Դեռ ևս «Մշակ»-ի խմբագրութեան մշտական աշխատակիցն էր Լէօն, երբ նրա համաձներում սկսեց լոյս ընծայել իր մեծ և նշանաւոր աշխատութիւններից մէկը՝ «Հայկական տպագրութեան» I հատորը։ Պատմական այդ աշխատութիւնը կազմում է Լէօի երկարամեայ պատմական ուսումնասիրութիւնների գլխաւոր արդիւնքը, որի նպատակն էր հայ ժողովրդին տալ պատմուածքներ նրա անցեալ մտաւոր, կուլտուրական և քաղաքական կեանքից, որը զբաղեցրել է բոլորովին անծանօթ էր նրան։ «Հայկական տպագրութեան» այդ հատորը իր մէջ ամփոփում էր հայերի պատմութիւնը XVI—XVII դարերում, պատմական մի այնպիսի նիւթ, որի համար հեղինակը ահագին աշխատանք էր թափել։ Հեղինակը այդ գործի վերնագիրը դրել է «Հայկական տպագրութիւն», որովհետև տպագրութիւնն է այն առանցքը, որի շուրջը պտոյտ է գալիս հեղինակի պատմական այդ աշխատութիւնը։ Իր տեսակի մէջ Լէօի այդ գործը առաջինն է, որովհետև դա մատչելի և կենդանի կերպով պատմում է հայերի անցեալը երկու դարերում։ Հէնց այդ է գլխաւորը պատճառը, որ նա կարճ ժամանակից յետոյ արժանացաւ երկրորդ՝ փոփոխած և լրացրած տպագրու-



թեան։ Պատմական ուսումնասիրութեան այդ գործի շարունակութիւնը կազմում է դրա երկրորդ հատորը, որ լոյս տեսաւ առանձին գրքով։

Հայկական տպագրութիւնից առաջ Լէօն լոյս էր ընծայել Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերութեան» հրատարակութեամբ անգլիական պերուութեան մարդասէր գործիչ «Գլադստոն»-ի կենսագրութիւնը, որ այնքան մեծ դեր էր կատարել հայկական դատի պաշտպանութեան գործում, նախապատրաստելով Անգլիայում հասարակական կարծիք վերոյիշեալ դատի համար։

Լէօն իր գրական առաջադիմութեամբ գրեթէ ամբողջապէս պարտական լինելով իւր ուսուցիչ Արծրունու և նրա ստեղծած շկոլային, չէր կարող անտես անել այդ ուսուցչի կատարած դերը մեր իրականութեան մէջ։ Եւ ահա Երծրունու կեանքն ու գործունէութիւնը նա դարձնում է իւր խոշոր ուսումնասիրութիւններից մէկի նիւթը, «Գրիգոր Արծրունի» վերնագրով։ Այդ եռահատոր աշխատութեան մէջ Լէօն տալիս է Գ. Արծրունու կեանքի ու գործունէութեան մանրամասն տեսութիւնը։ Նա դրա մէջ առատ փաստերով և օրինակներով աշխատում է ապացուցանել, որ Գ. Արծրունին իր ժամանակին երևան է գալիս իբրև առաջին մեծութիւնը հայկական հրապարակախօսութեան ասպարիզում։ Թէև Արծրունուց առաջ էլ մեր մէջ երևան են եկել ազնիւ, առաջադէմ և իրանց ժողովուրդի բարոյական վերածնութեամբ ոգեորուած հրապարակախօսներ, սակայն նրանցից և-ոչ մէկը Արծրունու պէս չէ ունեցել բեղմնաւոր և

երկարատև գործունէութիւն, անսահման եռանդ, մեծ տաղանդ և հասարակութեան վրայ մեծ ազդեցութիւն։ Լէօյի կարծիքով Արծրունին իր ժամանակի, իր շրջանի խոշոր պատմական անձնաւորութիւնն է, որ հայ հասարակութեան միտքը տանում էր դէպի առաջ, դէպի լոյս և իմացականութիւն։

Այդ աշխատութիւնից առաջ Լէօն առանձին գրքերով լոյս էր ընծայել «Յովսէփ կաթուղիկոս Արղութեան», «Ստեփաննոս Նազարեան» (2 հատոր) և «Ս. Մեսրոպ» գրուածքները, որոնց մէջ նա տալիս էր վերոյիշեալ պատմական անձնաւորութիւնների մանրամասն կենսագրութիւնն ու գործունէութիւնը։

1901 թուից սկսած Լէօն միաժամանակ սկսում է աշխատակցել նոր շրջանի «Մուրճ» ամսագրին, որ հրատարակւում էր Կ. Կրասիլնիկեանի խմբագիր-հրատարակչութեամբ։ Լէօն հրաւիրւում է նոր ամսագրի մշտական աշխատակից և միևնոյն ժամանակ խմբագրութեան անդամ և եռանդուն ու պատասխանատու մասնակցութիւն է ունենում ամսագրի բովանդակութեան նկատմամբ։ «Մուրճ»-ում նա վարում է մշտական բաժիններ, օր. գաւառական կեանքի տեսութիւն, պարբերական մամուլ և միշտ մասնակցում է խմբագրական ժողովներին։ Այդպէս նա աշխատակցում է մօտ 2 տարի «Մուրճ»-ին և հրատարակում է այնտեղ «Հայոց գրականութիւնը 18-րդ դարում», այսինքն «Հայկական տպագրութեան» Բ. հատորը։ «Մուրճ»-ումն են լոյս տեսնում Լէօի «Ցնծարած եղջն», «Հողի մարդիկը» և «Անզուգական» վէպերը և գրական ու քննադատական բազմաթիւ յօդուածներ։ Բացի դրանցից նա «Գրական կորուստներ» ընդհանուր վերնագրի տակ ծանօթացրել է հայ ընթերցողներին թիւրքահայ Մ. Մամուրեանի, տիկ. Սրբ. Տիւսաբի և Ստեփան Ոսկանի գրական դէմքերի հետ։ Մի խօսքով Լէօն կազմում էր Կրասիլնիկեանի «Մուրճ»-ի ամենագլխաւոր նեցուկը, որի վրայ ծանրանում էին այդ ամսագրի մի քանի պատասխանատու բաժինները։ Նրա ամենավերջին աշխատութիւնը, որ սկզբում տպուեց Վենետիկի Մխիթարեանների «Գեղունի» պատկերազարդ հանդէսում և ապա առանձին գրքով լոյս տեսաւ, «Ռուսահայոց գրականութիւնն» էր։ Դա մեր մէջ առաջին ամբողջական փորձն էր, որ տալիս էր մեր նորագոյն գրականութեան նշանաւոր դէմքերի գրական-քննադատական անալիզը։

Այդպէս վերին աստիճանի տոկունութեամբ Լէօն առաջ տարաւ իր հրապարակախօսական գործունէութիւնը մինչև 1906 թ., երբ նա ստիպւած էր թողնել «Մշակ»-ի խմբագրութիւնը, որի հետ այնքան սերտ կերպով կապւած էր Լէօի անունը։

Նա հեռացաւ «Մշակ»-ից ֆիզիքապէս բոլորովին քայքայուած և սաստիկ հիւանդ դրութեամբ։ Դրանից յետոյ նա մի տարի ուսուցիչ եղաւ Էջմիածնի Դէորգեան ճեմարանում, որպէս զի հնարաւորութիւն ունենայ միևնոյն ժամանակ Էջմիածնի Մատենադարանից նիւթեր ժողովել իր ապագայ մի մեծ աշխատութեան համար, որի վերնագիրն է «Հայոց պատմութիւնը 16-րդ դարից մինչև մեր օրերը»։ Դա պատմական նշանակութիւն ունեցող մի այնպիսի գործ է, որի կարիքը մեզ մօտ վաղուց է զգացւում։ Այդ աշխա-

թուլթիւնը պէտք է բաղկացած լինի երեք խոշոր հատորներից։ Առաջին հատորը, որ այժմ բոլորովին պատրաստ է, ամփոփում է իր մէջ հայոց մանրամասն պատմութիւնը 16 ից մինչև 19 րդ դարու բակիզբը։ Հայերի վերջին դարի պատմութիւնը (19 րդ) նա ամփոփել է երկու, դեռ ևս անպատրաստ հատորներում և օգտուել է հայկական ու ռուս բազմաթիւ աղբիւրներից։ Նրա մէջ ամփոփուած են հայկական աւելի ուշ ժամանակների գաղթականութիւնների պատմութիւնը, որոնք մինչև այժմ ոչ մի տեղ լոյս չեն տեսել. օր. Երուսաղէմի, Ղրիմի, Հաշտարխանի Պետերբուրգի, Ցարսկոյէ Սելոյի և Չերքէզահայերի գաղթականութիւնները։ Լէօի վերջին այդ մեծ գործը ունի նաև մի ընդհանուր պատմական ակնարկ հայերի անցեալի մասին, պատմական ամփոփումներ և մի առանձին ընդարձակ գլուխ «Սահմեդական կալուածատիրութիւնը» վերնագրով։ Սակայն այդ աշխատութիւնը, որի հրատարակութիւնը հեղինակի նիւթական կարողութիւնից շատ բարձր է, սպասում է դեռ հրատարակիչների։

Մի քանի խօսք էլ Լէօի մասին, իբրև հասարակական գործչի։ Բացի գրական գործունէութիւնից, Լէօն մասնակցել է նաև մեր մի քանի հասարակական հիմնարկութիւններում իբրև գործիչ։ Այդ գործունէութիւնը աւելի եռանդուն է եղել մանաւանդ Շուշում, որտեղ մեծ դեր է կատարել իբրև Շուշու թեմական դպրոցի հոգաբարձու և Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան Շուշու ճիւղի գանձապահ, քարտուղար և նախագահ։ Լէօի հոգաբարձութեան ժամանակ թեմական դպրոցի եկամուտը 8000-ից հասնում է մինչև 17000 ռուբլի, դպրոցը ունենում է ուսուցչական լաւ խումբ, իսկ բարեգործական ընկերութեան Շուշու շատ հարուստ գրադարանը Լէօի ջանքերի ստեղծածն է։ Թիֆլիզում նա եղել է Հայոց Հրատարակչական ընկերութեան խմբագրական մասնաժողովի գործունեայ անդամներից մէկը և այլն։



Եթէ վերցնենք նրա բոլոր գրուածքները, կտեսնենք, որ նա մեր նորագոյն գրականութեան խոշոր դէմքերից մէկն է կազմում, որի ամբողջ գործունեութիւնը նուիրուած էր հայ հասարակութեան մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան գործին, որի համար և նա գրաւեց հայ հասարակութեան հաւատը և խորին յարգանքը։ Դրան իբրև ապացոյց ծառայում է գրական այն մեծ ժողովրդականութիւնը, որ նա վայելում է հայ ընթերցողների շրջանում։

Սակայն ներկայումս վերին աստիճանի աննախանձելի է Լէօի դրութիւնը։ Գրական երկարամեայ գործունէութիւնից յետոյ նա հիւանդացել է ժամանակաւորապէս ընդհատել է իր այնքան սիրած գրական աշխատանքները։ Լէօն դեռ ևս գտնւում է իր ընդունակութիւնների զարգացման նախանձելի շրջանում և կարող է աւելի օգտակար հանդիսանալ մեր գրականութեան, եթէ նա նիւթական քիչ շատ նախանձելի պայմանների մէջ լինի իր քայքայուած առողջութիւնը վերականգնելու համար։

Եւ այժմ, երբ Թիֆլիզը նախապատրաստւում է տօնելու բազմաշխատ և բեղմնաւոր Լէօի գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը, հայ հասարա-

կուլթիւնը պէտք է աշխատի գործով ցոյց տալ իր յարգանքը նշանաւոր գրող Լէօին, եթէ ցանկանում է ապագայում էլ նրանից գրական աշխատանքներ պահանջել։ Լէօն մեր այն գրողներիցն է, որին մեր ժողովուրդը բարոյապէս պարտաւոր է նիւթականապէս ապահովել։

Նրա յօբելեանը ժամանակին ցոյց կը տայ մեր ժողովրդի բարոյական տոկունութեան և քաղաքացիական պարտականութեան աստիճանը։

Գինն է 10 կ.

Հրատարակութիւն Յոբելիանական Ցանձնաժողովի

Ցանձնաժողովի հասցէն՝ Тифлисъ, Семинарія Нерсесянъ,
Ректору А. АГАРОНЯНУ.

22164

12013